Հավելված N 1
ՀՀ վարչապետի 2020 թ.
օգոստոսի 6-ի N 903-Ա
որոշման

Ա Ն Հ Ա Տ Ա Կ Ա Ն Կ Ա Զ Մ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

Ն. Փաշինյան	- ՀՀ վարչապետ (համակարգող խորհրդի նախագահ)
Մ. Գրիգորյան	- ՀՀ փոխվարչապետ (ռազմավարությունների ոլորտը համակարգող) (համակարգող խորհրդի նախագահի տեղակալ)
Ռ. Բաղասյան	- ՀՀ արդարադատության նախարար
Ա. Ջանջուղազյան	- ՀՀ ֆինանսների նախարար
Ա. Հարությունյան	- ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար
Ս. Պապիկյան	- ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար
Հ. Արշակյան	- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար
Ֆ. Ցոլակյան	- ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար
Ա. Թորոսյան	- ՀՀ առողջապահության նախարար
Դ. Տոնոյան	- ՀՀ պաշտպանության նախարար
Ջ. Բաթոյան	- ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ջ. Մնացականյան	- ՀՀ արտաքին գործերի նախարար
Ա. Գրիգորյան	- ՀՀ անվտանգության խորհրդի քարտուղար
Ա. Քյարամյան	- ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն
Վ.Ղազարյան	- ՀՀ ոստիկանության պետ
Ա. Դավթյան	- ՀՀ գլխավոր դատախազ (համաձայնությամբ)
Ս. Խաչատրյան	- ՀՀ հատուկ քննչական ծառայության պետ (համաձայնությամբ)

Հ. Գրիգորյան - ՀՀ քննչական կոմիտեի նախագահ (համաձայնությամբ)

Ա. Թաթոյան - ՀՀ մարդու իրավունքների պաշտպան (համաձայնությամբ)

Ա. Քոչարյան - ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Իմ քայլը» խմբակցություն (համաձայնությամբ)

Գ.Գորգիսյան - ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, «Լուսավոր Հայաստան» խմբակցություն (համաձայնությամբ)

Երեք հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ (համաձայնությամբ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2020 թ.
օգոստոսի 6-ի N 903-Ա
որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ

1. ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

1. Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի (այսուհետ՝ համակարգող խորհուրդ) նպատակն է Հայաստանի Հանրապետության ոստիկանության բարեփոխումների ռազմավարության և դրանից բխող 2020-2022 թվականների գործողությունների ծրագրի (այսուհետ՝ ռազմավարություն և գործողությունների ծրագիր) լիարժեք և արդյունավետ իրագործման, ինչպես նաև իրավապահ, դատական և այլ ոլորտների զարգացման ծրագրերի հետ փոխգործելիության ապահովումը:

2. Համակարգող խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) համակարգում է ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման ընթացքն ու կայացնում անհրաժեշտ որոշումներ.

2) ուսումնասիրում ու վերլուծում է ռազմավարության և գործողությունների ծրագրով պատասխանատու մարմինների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ կիսամյակային հաշվետվությունները.

3) կիսամյակային հաշվետվությունների հիման վրա մինչև հաջորդ տարվա հունվարի 31-ը հաստատում է ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը.

4) ուսումնասիրում և վերլուծում է ինչպես համակարգող խորհրդի քարտուղարության, այնպես էլ՝ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կողմից իրականացված ռազմավարության և գործողությունների ծրագրի մշտադիտարկման ու գնահատման արդյունքները.

5) յուրաքանչյուր տարվա վերջում՝ համակարգող խորհրդի քարտուղարության կողմից տարեկան ամփոփ հաշվետվությունն ստանալուց և վերլուծելուց հետո, հիմնվելով մշտադիտարկման արդյունքների ու առաջարկությունների վրա, համապատասխան պատասխա-

նատու մարմինների ներգրավմամբ կարող է առաջարկներ ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ վերանայելու ռազմավարությունը և գործողությունների ծրագիրը.

6) ռազմավարության և գործողությունների ծրագրի ազդեցության գնահատման նպատակով միջնաժամկետ ու երկարաժամկետ փուլերում տարբեր թիրախային խմբերում կարող է նախաձեռնել հանրային կարծիքի հարցումներ, որոնց արդյունքների հիման վրա չափվում է բարեփոխումների ազդեցությունը հասարակության վրա: Միջնաժամկետ փուլում իրականացված հարցումների արդյունքների գնահատմամբ ու վերլուծությամբ կարող է նախաձեռնել ռազմավարության և գործողությունների ծրագրի, ինչպես նաև իրականացման մեթոդների ու մեխանիզմների վերանայման և փոփոխությունների նոր շրջափուլ.

7) քննարկում է բարեփոխումների իրականացման ընթացքում առաջացած խնդիրները և ներկայացնում առաջարկություններ դրանց լուծման ուղղությամբ.

8) ապահովում է միջգերատեսչական համագործակցությունը բարեփոխումների իրականացման գործընթացում:

2. ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Համակարգող խորհուրդն իր աշխատանքներն իրականացնում է նիստերի միջոցով, որոնք գումարվում են, ըստ անհրաժեշտության, բայց ոչ ուշ, քան վեց ամիսը մեկ անգամ, ինչպես նաև արտահերթ նիստերի միջոցով: Նիստերն անհրաժեշտության դեպքում կարող են անցկացվել նաև առցանց (հեռավար):

4. Համակարգող խորհրդի նիստերը հրավիրում և վարում է համակարգող խորհրդի նախագահը:

5. Համակարգող խորհրդի նախագահի բացակայության դեպքում նիստը վարում է համակարգող խորհրդի նախագահի տեղակալը՝ համակարգող խորհրդի նախագահի հանձնարարությամբ:

6. Համակարգող խորհրդի յուրաքանչյուր նիստ սկսվում է նիստի օրակարգի հաստատմամբ և նախորդ նիստում ընդունված որոշումների կատարման ընթացքի վերաբերյալ համակարգող խորհրդի նախագահի անդրադարձով:

7. Համակարգող խորհրդի նիստն իրավազոր է, եթե դրան մասնակցում է համակարգող խորհրդի անդամների առնվազն երկու երրորդը:

8. Համակարգող խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ: Ձայների հավասարության դեպքում նիստը վարողի ձայնը վճռորոշ է:

9. Համակարգող խորհուրդն իր արտահերթ նիստերը գումարում է համակարգող խորհրդի նախագահի նախաձեռնությամբ կամ անդամների առնվազն մեկ երրորդի առաջարկությամբ:

10. Համակարգող խորհրդի անդամները հերթական նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի մասին համակարգող խորհրդի քարտուղարության կողմից տեղեկացվում են նիստի անցկացման օրվանից առնվազն 5 օր առաջ, իսկ արտահերթ նիստի մասին՝ ողջամիտ ժամկետում:

11. Համակարգող խորհրդի անդամի առաջարկությամբ և համակարգող խորհրդի հրավերով նիստերին կարող են մասնակցել շահագրգիռ պետական մարմինների ներկայացուցիչներ, համապատասխան մասնագետներ, այդ թվում՝ միջազգային փորձագետներ, զանգվածային լրատվության միջոցների, մասնավոր կազմակերպությունների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

12. Համակարգող խորհրդի նախագահի հանձնարարությամբ՝ նիստի օրակարգի հարցերը նախապատրաստելու նպատակով կարող են կազմակերպվել նախնական քննարկումներ համակարգող խորհրդի անդամների հետ:

3. ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆԸ

13. Համակարգող խորհրդի քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) գործառույթներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության ոստիկանությունը:

14. Քարտուղարության հիմնական նպատակն է ապահովել համակարգող խորհրդի բնականոն գործունեությունը:

15. Քարտուղարությունը՝

1) մինչև յուրաքանչյուր կիսամյակի ավարտին հաջորդող 5-րդ աշխատանքային օրը ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացման համար պատասխանատու մարմիններից ստանալով վերջիններիս կողմից իրականացված աշխատանքների հաշվետվությունները՝ 2 աշխատանքային օրվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության ոստիկանության կողմից կատարված աշխատանքների հաշվետվության հետ միասին, ներկայացնում է համակարգող խորհրդի անդամներին.

2) աջակցում է ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման ընթացքի մշտադիտարկմանն ու գնահատմանը՝ արդյունքները յուրաքանչյուր տարվա վերջում ներկայացնելով համակարգող խորհրդի անդամներին.

3) սույն կետի 1-ին ենթակետով նախատեսված հաշվետվություններն ստանալուց հետո 2 աշխատանքային օրվա ընթացքում հրապարակում է Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական կայքէջում, հրապարակում է նաև համակարգող խորհրդի կողմից ընդունված՝ ռազմավարության և գործողությունների ծրագրի կատարման տարեկան հաշվետվությունը.

4) նախապատրաստում է համակարգող խորհրդի նիստի օրակարգին վերաբերող համապատասխան նյութերն ու դրանք տրամադրում համակարգող խորհրդի անդամներին.

5) կազմում է համակարգող խորհրդի որոշումները և նիստերի արձանագրությունները.

6) վարում է համակարգող խորհրդի աշխատանքների հետ կապված գործավարությունը.

7) ապահովում է համակարգող խորհրդի որոշումների և նիստերի արձանագրությունների տրամադրումը համակարգող խորհրդի անդամներին:

4. ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

16. Համակարգող խորհրդի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2020 թ.
օգոստոսի 6-ի N 903-Ա
որոշման

Կ Ա Ր Գ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄՐՑՈՒՅԹԻ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Ոստիկանության բարեփոխումները համակարգող խորհրդի (այսուհետ՝ համակարգող խորհուրդ) անհատական կազմում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին ընդգրկելու նպատակով մրցույթ անցկացնելու հետ կապված հարաբերությունները: Մրցույթը կազմակերպվում և անցկացվում է համակարգող խորհրդի քարտուղարության (այսուհետ՝ քարտուղարություն) կողմից:

2. Համակարգող խորհրդի անհատական կազմում ընդգրկվում են արդարադատության, իրավապահ համակարգի զարգացման, մարդու իրավունքների պաշտպանության, ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման և իրավապահ համակարգի կադրերի վերապատրաստման ոլորտներում գործունեություն ծավալող երեք հասարակական կազմակերպության ղեկավարներ:

2. ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄՈՒՄ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

3. Քարտուղարությունը մրցույթն սկսելուց առնվազն 10 օր առաջ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական www.police.am կայքում և զանգվածային լրատվության միջոցներով հրապարակում է հայտարարություն:

4. Հայտարարության մեջ ներառվում են հետևյալ տվյալները՝

1) համառոտ տեղեկություններ մրցույթի անցկացման նպատակի ու կարգի մասին.

2) հայտերը ներկայացնելու վայրը, հասցեն, հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն և քարտուղարությունում հայտերն ընդունող պատասխանատու անձի հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն.

3) հայտերի՝ առձեռն հանձնելու դեպքում ընդունման օրերը և ժամերը.

4) հայտեր ներկայացնող հասարակական կազմակերպությանը ներկայացվող պահանջները և հայտին կից ներկայացվող փաստաթղթերի ցանկը.

5) հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը:

5. Հասարակական կազմակերպությունները հայտերը ներկայացնում են քարտուղարություն՝ հայտարարությունը հրապարակվելու հաջորդ օրվանից սկսած՝ 10 օրվա ընթացքում:

3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՏԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

6. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում ունեցող այն հասարակական կազմակերպությունները, որոնք գործունեություն են ծավալում սույն կարգի 2-րդ կետում նշված ոլորտներում, վերջին հինգ տարվա ընթացքում ունեն տվյալ ոլորտի առնվազն երեք տարվա գործունեության փորձ և այդ ժամանակահատվածում տվյալ ոլորտում իրականացրել են առնվազն երկու ծրագիր:

7. Համակարգող խորհրդի անհատական կազմում ներգրավման գործընթացին մասնակցելու նպատակով ներկայացված հայտում պետք է ներառված լինեն հետևյալ տվյալները՝

1) կազմակերպության անվանումը.

2) կազմակերպության գտնվելու վայրը.

3) կազմակերպության ղեկավարի անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, կոնտակտային տվյալները (հեռախոսահամարը, ֆաքսը, էլեկտրոնային փոստը).

4) կազմակերպության գործունեության բնույթը, նախանշված ոլորտը և տվյալ ոլորտում գործունեություն ծավալելու ժամանակահատվածը:

8. Հասարակական կազմակերպությունները հայտերը ներկայացնում են քարտուղարություն՝ հայտարարության մեջ սահմանված ժամկետներում:

9. Հայտին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

1) կազմակերպության կանոնադրության և պետական գրանցման վկայականի պատճենները.

2) տեղեկություններ ոլորտում առկա փորձի, դրա տևողության, իրականացրած ծրագրերի և աշխատանքային գործունեության, դատահիրավական համակարգի բարեփոխման, զարգացման, իրավապահ համակարգի կադրերի վերապատրաստման և

գործունեության աշխարհագրության, կատարած հետազոտությունների ու պատրաստած զեկույցների վերաբերյալ:

10. Հայտը և կից ներկայացվող փաստաթղթերը (այսուհետ՝ փաստաթղթեր) քարտուղարություն կարող են հանձնվել առձեռն, ուղարկվել փոստով կամ ներկայացվել հայտարարության մեջ նշված էլեկտրոնային փոստի հասցեին՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ հաստատված կամ ստորագրված և տեսաներածված:

11. Փոստով և էլեկտրոնային եղանակով ուղարկված փաստաթղթերի ստացման վերաբերյալ հասարակական կազմակերպությունը ծանուցվում է փաստաթղթերը ստանալուն հաջորդող մեկ աշխատանքային օրվա ընթացքում՝ իր կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեով:

12. Սահմանված ժամկետից ուշ ներկայացված հայտերը չեն ուսումնասիրվում:

13. Փոստով ուղարկված փաստաթղթերը համարվում են ժամկետում ներկայաց-ված, եթե դրանք հանձնվել են փոստ՝ մինչև սույն կարգի 5-րդ կետում նշված ժամկետի ավարտը:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԳՐԱՎՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

14. Հասարակական կազմակերպությունների ներգրավումն անցկացվում է երկու փուլով՝ փաստաթղթային և ընտրական:

15. Փաստաթղթային փուլում քարտուղարությունը ստուգում է փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը սույն կարգի 3-րդ գլխով սահմանված պահանջներին:

16. Փաստաթղթերի թերի լինելու կամ անհրաժեշտ փաստաթղթերի ցանկին չհամապատասխանելու դեպքում հայտ ներկայացնողը դրա մասին ծանուցվում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում (հեռախոսով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր), և նրան տրամադրվում է երկու աշխատանքային օր՝ թերությունները շտկելու համար:

17. Սահմանված ժամկետում թերությունները չշտկելու դեպքում հայտին ընթացք չի տրվում:

18. Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են առավելագույնը երեք հասարակական կազմակերպություններ, ապա այդ կազմակերպությունները փաստաթղթային փուլի արդյունքների հիման վրա ընդգրկվում են համակարգող

խորհրդի կազմում: Եթե սահմանված չափանիշներին համապատասխանում են տվյալ ոլորտում գործող երեքից ավելի հասարակական կազմակերպություններ, ապա այդ կազմակերպությունների մասնակցությամբ անցկացվում է երկրորդ՝ ընտրական փուլը:

19. Սահմանված չափանիշներին համապատասխանող հասարակական կազմակերպություններն ընտրական փուլի անցկացման նպատակով հանդիպման օրվա, ժամի և տեղի մասին ծանուցվում են հեռախոսազանգի միջոցով, էլեկտրոնային փոստով կամ գրավոր՝ հանդիպումից առնվազն մեկ աշխատանքային օր առաջ, հանդիպումների ժամանակացույցը տեղադրվում է նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական www.police.am կայքում:

20. Ընտրական փուլն անցկացվում է քարտուղարությունում տեղի ունեցող հանդիպման ժամանակ, որտեղ հրավիրվում են բոլոր հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, որոնք հաղթահարել են փաստաթղթային փուլը: Հանդիպմանը ներկա հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները քննարկումների ճանապարհով ընտրում են այն երեք կազմակերպություններին, որոնք ներգրավվելու են Համակարգող խորհրդի աշխատանքներին, որպես համակարգող խորհրդի անդամ: Հասարակական կազմակերպությունների ընտրության եղանակը՝ կոնսենսուսային կամ մեծամասնական, ընտրում են ընտրական փուլի մասնակիցները հանդիպման սկզբում:

21. Քննարկումների ճանապարհով մասնակիցներից թվով երեք հասարակական կազմակերպություններ չընտրվելու պարագայում հանդիպման վերջում անցկացվում է վիճակահանություն բոլոր մասնակիցների միաժամանակյա մասնակցությամբ՝ ընտրական փուլն ավարտելու և համակարգող խորհրդի կազմում ներգրավվող երեք հասարակական կազմակերպություններին ընտրելու նպատակով: Վիճակահանության ժամանակ բոլոր մասնակիցների քանակով պետք է առկա լինեն վիճակահանության թերթիկներ, որոնցից միայն երեքում պետք է նշված լինի համակարգող խորհրդի կազմում ներառվելու վերաբերյալ նշում: Մասնակիցներն այբբենական կարգով ընտրում են մեկ վիճակահանության թերթիկ, և արդյունքը հայտարարվում է բոլոր մասնակիցների ներկայությամբ:

22. Մրցույթի արդյունքների մասին տեղեկատվությունը քարտուղարությունը մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի պաշտոնական www.gov.am կայքում, Հայաստանի Հանրապետության ոստիկանության պաշտոնական www.police.am կայքում:

23. Եթե համակարգող խորհրդի անհատական կազմում ներգրավված հասարակական կազմակերպությունը հրաժարվում է համակարգող խորհրդի աշխատանքներին մասնակցելուց, կամ նրա գործունեությունը դադարում է օրենքով սահմանված կարգով, ապա սույն կարգով սահմանված ընթացակարգով մեկամսյա ժամկետում կազմակերպվում է նոր մրցույթ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ծ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ